Մրցույթի հայտարարություն «Այգեկի Մուշեղ Մովսիսյանի անվան միջնակարգ դպրոց»ՊՈԱԿ-ի տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար

ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշմամբ հաստատված՝ պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգի 6-րդ և 7-րդ կետերի համաձայն՝ «Այգեկի Մուշեղ Մովսիսյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման խորհուրդը հայտարարում է մրցույթ՝ հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղն զբաղեցնելու համար:

1. Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1) ՀՀ քաղաքացիությունը.

2) ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր):

2. Մրցույթին մասնակցելու համար հավակնորդը ներկայացնում է՝

1) դիմում՝ հաստատության խորհրդի նախագահի անունով.

2) Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը.

3) հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի պատճենը.

4) տվյալ հաստատության զարգացման ծրագիրը թղթային և էլեկտրոնային տարբերակներով.

5) ինքնակենսագրություն:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են «Այգեկի Մուշեղ Մովսիսյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում 2022 թվականի դեկտեմբերի 20-ից մինչև 2023 թվականի հունվարի 11-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9^{00}-ից մինչև ժամը 15^{00}-ը, բացի հանգստյան (շաբաթ, կիրակի) և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2023 թվականի հունվարի 25-ին՝ ժամը 14^{00}-ին, «Այգեկի Մուշեղ Մովսիսյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում (Արմավիրի մարզ, գյուղ Այգեկ, 1-ին փողոց, թիվ 1/1):

Տեղեկությունների համար դիմել՝ հեռ.՝ +37441540765, էլ. հասցե՝ aygek@schools.am.